




ՀԱՅԻՐԱՔԱՆԻ ԴԱՐԱՆ

ԱՐԱՐԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆ

ԿՐԻՍՏԻԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿՐԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԵ ՊԱՏՐԻԱՐԻԱՐԱՆԻ



15

ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀՌՈՎՄ



1. Կաթողիկէ Արձագանգը առ այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վեցանոցի բաժանորդագիրն է մեկ մեծիս անոց հաւար որ ի Կ. Պօլիս՝ Կաթողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիկոսոսարաններու կամ Առաջնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դիմելու հաւար՝ Չորս (4) ֆրակ է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտ Կ. Պօլիս փոխադրուի, ծաւալն ու ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանք վերջնականապէս պիտի ճշդուին: — Մեկ թիւը՝ մեկ դանդիկն է:

2. Արձագանգը կը հրատարակուի Եսրաք օրերը:

3. Խմբագրութիւնս պատրաստեալ չի անպատճառ կամ նոյնութեանը հրատարակելու իրեն դիմած ո՛ր եւ չօրում:

4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը անբողբոյսի կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրուին ուղղակի խմբագրութեան:

6. Ձեռագիրներ եւ չեն դարձուիր:

7. Ծանուցեալն հաւար մասնաւոր պայմանադրութիւն կը կատարուի:



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՔԱՐԱՐԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ

Առաջին Տարի

30 Սեպտեմբեր 1911

Թիւ 15.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՄԻՒՆՀԱՂԻՈՍ

Ի ՀՈՌՈՎ Մ

Գեր. Գեր. Վարդապետաց եւ Սիրեցեալ Ժողովրդեան
Ողջոյն եւ աստուածաւանդ Օրհնութիւն.

Սիրեցեալ Որդեա՛կք ի Քրիստոս,

Երիցս Երանեալ Ս. Քահանայապետի արժանութեամբ եւ շնորհիւ՝ մեր եկեղեցւոյ տարեգրոց մէջ չ'ստանուած եզակիան պայմաններու մէջ պիտի գումարենք յառաջիկայ Հոկտեմբեր 15. ին կիրակի օր. Ազգային Կաթողիկոսական Սինոդոս մը, որուն հրաւիրած ենք արդեն. մեր նուիրապետութեան բոլոր Արհի. Արհի. Արքեպիսկոպոսներ, Եպիսկոպոսներ, Միաբանութեանց Արքաւիշոքներ եւ Լեօպոյսի հայ Արքեպիսկոպոսն եւ ուրիշներ: Եզակիան պայմաններու մէջ ըսինք. որովհետեւ Հոռովմայ Մեր Կրօնքի կեդրոնին մէջ, ուր եղին զվեմն հաւատոյ հիման Սուրբ Եկեղեցւոյ,

Քրիստոսի Փոխանորդին հովանւոյն տակ, այնքան մարտիրոսաց եւ մանաւանդ Գլխաւոր Առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի շիրիմներուն մօտ, Արեւմտեան եկեղեցւոյ հոյակապ նուիրապետութեան, Եւրոպիոյ Քաղաքակիրթ Ողղափառ ազգաց այժիմ առջեւ ճշմարիտ հայ եկեղեցւոյ, Լուսաւորչայ հարազատ ու հաւատարիմ որդւոց, Կաթողիկէ հայ նուիրապետութեան Ներկայացուցիչ պիտի գումարուին հայ ծիսի շեղութեամբ կատարելու ամենահանդիսաւոր, ամենանուիրական գործ մը, Ազգային համագումար Սի. Ողոս մը:

Բայց այդ գործոյն շեղութենէ աւելի, մեր եկեղեցւոյ եւ Հասարակութեան բազմադիմի պէտքերն են որ Անոր կարեւորութիւնը կ'աւելցնեն ու անպայման պատշաճութիւն կընծայեն: Վասն զի ստիպող պէտքերու պատշաճագոյն դարման չի կրնար գտնուիլ իսկ նոյն ինքն թշկոյնութեան ակնադրիւրէն. եւ մեր ակնադրիւրն է Հոռովմայ պաշտելի Գահն, որուն կառչելով միայն կարելի է ապահովել Կրօնի եւ Եկեղեցի, հետեւաբար եւ հոգւոյ փրկութիւն:

Ուստի Սիրեցեալ Որդեակի, կը հրաւիրենք զձեզ այս առթիւ նախ՝ երախտապարտ հոգւով մաղթանքներ վերառաքել առ Բարձրեալն Աստուծ՝ մեր հայրախնամ Քահանայապետին Պիոսի Ժ. Ի Ս. Հօր բարօրութեան ու արեւշատութեան համար որ իր հայրական գրառատութեամբ առ մեզ՝ թոյրորդին ուզեց զեղուլ եւ յորդել ու շնորհել Հայ Կաթողիկէ եկեղեցւոյս այս փառաշուք պատեհութիւնը: Երկրորդ՝ կը յանձնարարենք անդադար ու մասնաւոր եռանդեամբ աղօթել, որ Սուրբ Հոգին յոյս տայ Սի. Ողոսական Հարց, որ հասարակութեան օգտակար եւ Եկեղեցւոյ պայծառութեան յարմար որոշողութիւններ եւ կարգադրութիւններ սահմանեն, որոնցմէ անշուշտ կախում պիտի ունենայ մեծաւ մասամբ մեր ամէն ձեռնարկներուն եւ ձեռնալ ակնկալութեանց յաջողութիւնը: Աղօթեցե՛ք, Սիրեցեալ Որդեակի, որ խաղաղութեանց տուողն Աստուծ խոնջութիւնները ցածուցանէ, առապարները հարթէ. խոչնդոտները վերցնէ, ու դիւրացնէ եկեղեցւոյ փրկաւէտ գործն մեր հասարակութեան մէջ:

Ահա այս նպատակաւ կը յանձնարարենք որ հոկտեմբերի 15. էն սկսելով, ամէն օր աղօթե՛ք մեր դիման համար, Յիսուսի

Ամենասուրբ Սրբիկ եւ անկէ դուրս վազող Աստուածային արեան: Այս Սինոդի միջոցին Սուրբ Պաշարագներ տեսնէ՛ք, ջերմե-
նանդութեամբ Ամենասուրբ Հաղորդութեան այցելութիւններ
ընէ՛ք, հաղորդութիւն յաճախ, Սուրբ վարդաւանի աղօթքն ընէ՛ք. մա-
նաւանդ պզտիկ տղայոց մաղթանքներ ընել տա՛ք: Կը պատահի՞րեմք
որ ամեն եկեղեցիներու մէջ որոշեալ ժամուն մասնաւոր զան-
գակաւ ժողովուրդը հրաւիրելով ստեպ անգամ, եւ ի մասնաւորի
կիրակի եւ տօնի օրեր Սրբութիւն ի բազմոցի դրուի, մեծեն մին-
ջեւ պզտիկ Անարատ Յղացեալ Կուսին բարեխօսութեան դիմեն. Ս.
Յովսէփայ Աստուածածոր, Գլխաւոր Առաքելոցն Պետրոսի եւ Պո-
ղոսի եւ Դրիգորի Լուսաւորչի Սրբոյ Հօրն մերոյ եւ հայաստան-
եայց Եկեղեցւոյ ամենայն պաշտպան Սրբոց միջնորդութիւնը
խնդրեն եւ առանձին պաղատանքներ ըլլան ամեն տեղ առ Տէրն
ողորմութեանց, որպէս զի վերջապէս մենք ալ ուրիշ Կաթողիկէ
ազգերու պէս նորոգութիւն, շինութիւն եւ կազմութիւն այն բարե-
շէն կարգաւորութեամբ որ միայն Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ կը
գտնուի. այն կենսասու ճշմարտութեամբ որ միայն Կաթողիկէ
Եկեղեցւոյ մէջ կը պահուի, այն անմոլար Հաւասքի սկզբունքնե-
րով որոնց աւանդապահ է միայն Կաթողիկէ Եկեղեցին:

Աղօթեցէ՛ք, Սիրեցեալ Որդեակք, եւ վստահ եղէ՛ք թէ բարե-
խնամողն Աստուած որ գիտէ « զպէսս մեր եւ զկարիս առաւել
քան զոր խնդրեմք եւ իմանամք » անշուշտ պիտի վարձատրէ Ձեր
հաւասքն, յաջողելով Նուիրապետութեան ձեռնարկը ի փառս իւր
եւ ի բարգաւաճանս Սուրբ Եկեղեցւոյ. Ամեն:

Այդ յուսով կ'օրհնենք ուրոյն ուրոյն զամենեւի յանձնելով
զձեզ Ամենասուրբ Սրբին Յիսուսի եւ Անարատ Յղացեալ Տիրա-
մօր Սուրբ Կուսին:

Եւ եմք հաւաստեօք սիրոյ հոգեւոր Որդեկացդ.

Աղօթարար

✠ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԴ. ԹԷՐԶԵԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՊԱՏՐԻԱՐԺ ՏԱՆԵ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՅ

Հոռով՝ 8 Սեպտեմբեր 1911.

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ԴԻՏՈՂ

(Շարունակութիւն եւ Վերջ)

ԺԲ. Կ'ըսէ Դիտողը. « Ծրագրին այն մասերը որոնք կը վերաբերին Քահանայից ձեռնադրութեան, Ժողովրդապետաց կարգման կամ ուրիշ եկեղեցական կարգադրութեանց, անոնք վճիռ չեն, այլ յանձնելի վերին Ատենի որոշողութեան... ուստի վախճանու բան չկայ »: Հոգւոյ շատ զարմանալի վիճակ մ'ունի այս Դիտողը. իր անկեղծ եւ անկողմնակալ ըլլալը հաստատցնել ուզելով, կարծես խաբել կ'ուզէ: Բայց տա կերպը իրեն համար շատ աւելի վնասակար է: Բարձրաձայն աղաղակելով՝ թէ « Ազգին նպատակը եկեղեցական — իրաւարանական կանոնները քննել չէ » եւ. ինչպէս տեսանք ի վեր անդր, հաս ալ կ'ընդունի որ ծրագիրը « եկեղեցական կարգադրութիւններ » ըրեր է որոնք սակայն « վճիռ չեն » եղեր: Ծրագրին քննութեան քանի մը նիստերուն մեջ պարագլուխները բոլորք բառնալով կ'ըսէին թէ իրենք բնաւ կրօնքի կամ եկեղեցական կանոնաց վերաբերեալ բան մը դրած չեն ծրագրին մէջ: Դիտողը հակառակը կը հաստատէ: Ուրեմն դրուած են այսպիսի կէտեր. Թանկազին խոստովանութիւն: Ուզեր են միջամուտ ըլլալ կրօնքի վերաբերեալ բաներու մէջ եւ « եկեղեցական ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ » ըրեր են: Նախ՝ իրենց չափն ու սահմանը անցեր են. ըսել է ստոյգ է եկեղեցական իշխանութեան գանգատը թէ հակառակ եկեղեցւոյ կանոնաց է ծրագիրը եւ թէ զայն յօրինողները զիտում ունեցած են եկեղեցւոյ կանոնները փոխել, ստրկացնել, տիրել, աշխարհականացնել. ահա իրենց փափագը, յանգանութիւնը, բացայայտ խոստովանեալ: Երկրորդ, իրենց ըրած այս « եկեղեցական կարգադրութիւնները » ամբողջովին մոլորական են. ինչպէս ցոյց կը տրուի յաճախ յիշուած « Տեսութիւն Կանոնագրի նոր ծրագրի վրայ » գրքոյկին մէջ: Երրորդ՝ այս « եկեղեցական կարգադրութիւններէ » Դիտողին ցոյց տալ ուզածին պէս քանի մը հաստ չեն, այլ բազմաթիւ. ծրագիրը գլխէ գլուխ է այս մոլորութիւններով: Հետեւաբար եկեղեցական իշխանութիւնը պարզապէս իր պարտքը միայն կատարեց եւր մերժեց զայն ու դատապարտեց: Եւ ամէն անոնք որ անոր դէմ բողոքեցին, ժողովուրդը գրգռեցին, զայն նախատեցին, շատ ծանր պարտազանցութիւն ըրին, ապօրոյս:

բած եղան օրինակս եկեղեցական իշխանութեան գէմ: Եւ Յիսուսի խօսքը ստուգուեցաւ: « Ով որ զձեզ կ'անարգէ, զիս անարգած կ'ըլլայ »: Զորորդ՝ այս մոլորական « եկեղեցական կարգադրութիւնները » իրենք գիտակցաբար ըրին: հետեւաբար այդ անունները որ իրենց տրուեցան, ճիշդ են և ճշմարիտ, և դարձեալ կը հետեւի որ գո՛նէ « ոմանք ուզեցին ինքնուրոյն և ազատ եկեղեցի մը հաստատել »: ուստի իրաւամբ Դիտողին անիրաւ բացագանչութիւնը ստանց պէտք է վերագարձնել և ըսել դառնութեամբ: « Ամօթ այս տեսակ յանդուգն ձեռնարկի »: Հինգերորդ՝ Դիտողը կ'աճապարէ այս մոլոր « եկեղեցական կարգադրութիւնները » անբասիր ընել չքմեղացնել՝ անար համար որ « անոնք վնիւ չեն »: Ի հարկէ, ո՞վ Դիտող, ի հարկէ. վնիւ չեն, և վնիւ չեն կրնար ըլլալ: Եկեղեցին շատ տեսած է աոյսալիսի հերձուածամիտ յանդգնութիւններ: Բայց իրենց կողմանէ մտածելով, բոլորովին կը սխալիս: Քանզի անոնք իրենց այս մոլորութիւնները վնիւ կ'ենթադրեն. այնպէս յաթոռոյ կը խօսին, կը վարդապետեն, պատգամ կ'արձակեն. գաւառներուն ապստամբական հրահանգներ կուտան. հոգեւոր ձեռնհաս իշխանութեան՝ գիտողութեանց դէմ, ժողովոյ մէջ ձեռք կը վերցնին և մոլորութիւնը կ'անոն կ'ընեն, այս մոլորութեանց դատապարտութեան դէմ կ'ընդվզին, կ'ապստամբին: Եւ եթէ քանի մը բաներ փոխելու կամ յապաւելու ձեւեր կ'առնուն, մնացած մեծագոյն մասը հատուտելու համար է: Ասոնք թէ յանդուգն են, թէ՛ յամառեալ, թէ՛ անհնազանդ: Վեցերորդ՝ Դիտողը կ'ըսէ. « Ուստի վախճարու բան չկայ »: Կ'ապահովցնեմ զքեզ, որ Ս. Եկեղեցին բնաւ վախցած չէ, չվախնար և պիտի չվախնայ, անիկա խոստում ունի Աստուածորդին: « Եւ դրունք դժոխոց գնա մի՛ յաղթահորեացին »: անիկա հրահանգ ունի՝ Առաքեալէն. « Զբարեօք տունդն պահեաջիր... Հա՛ս ի վերայ ժամու և տարածամու յոնդիմանէ՛... գուցէ չգատտանան »: Եկեղեցին կը վախնայ միայն չըլլայ որ հոգիներն կորսուին մոլորութեան շաւղին մէջ. բայց ինչ ընէ. Հովսեփեան Քրիստոս ըսած է. « Եթէ Եկեղեցւոյն չլսեր, ըլլայ քեզի իբրեւ հեթանոս ու իբրեւ մաքաւս »: Եթեւերսրդ, այս մոլորութիւններն վերին Ատեանի չեն կրնար տարուիլ, որովհետեւ անիկա մոլորութեանց ատեան չէ, մանաւանդ երբ « յախազգոյշ յայտարարութիւններ » կան և կանխիկ ապառնալիք՝ զինքն « ստիպելու այդ մոլորական ծրագիրն ընդունելու »: Դարձեալ որովհետեւ վերին Ատեանին բոլոր անդամները արդէն մերժեցին այդ ծրագիրը: Դարձեալ որովհետեւ վերնազայն, Գերագոյն Ատեանը, Ս. Գահը դատապարտեց այդ ծրագիրը:

Ուրեմն, ո՛վ Դիտող, եթէ անկեղծ ես, հարկ է խոստովանիս թէ Հովուականը սխալ և կողմնական լուրերու, անհիմն կասկածներու և ենթադրութեանց վրայ յեցուցած Ձե՛ իւր բանախօսութիւնը, ինչպէս կ'ըսես, եւ սիրաշահելու ամէն միջոցներ փորձուելով ի դերեւ ելլելէ վերջը կատարեալ արդարութեամբն Քրիստոսի և ճիշդ ըստ օրինաց Ս. Եկեղեցւոյ գրուած է այն Հովուականը:

ԺԳ. Պէտք է յիշեցնենք Դիտողին որ հիմնովին սխալ են այն լուրերը որ կը շրջաբերուին յանուն քանի մը Կարգինաւորութեան և Լեւոն ԺԳ. Ս. Պապին:

1. Ինչ որ կո՛ւգէ մակարեւուիլ քանի մը նամակներէն զոր բարեյիշատակ Կարգ. Սիմէոնի՝ Նախագահ Բօքոսկանտայի, գրած է՝ 1880 ին, 1887 ին, միայն կը պարունակէ շնորհ մը նոր Կաթողիկոսի գահակալութեան և ժողովրդական բարի վկայութեան: Եւ քանի որ Ս. Աթոռն է որ կը շնորհէ, ինքը կը մնայ միշտ Տէր Իրաւանց և երբ յարմար կամ հարկաւոր դատէ, ետ կ'ուռնու: Եւ բարի վկայութեանց խնդրոյն վրայ պէտք է գիտիլ նաեւ որ Ս. Աթոռը զայն բնաւ ընտրութիւն չկրնար ըմբռնել և բնաւ չենթադրեր որ անով կաշկանդուած ըլլայ Սինդոսը, որ երբ տեսնէ որ վկայեալը անյարմար են, իշխանութիւն ունի դուրսէն ալ ընտրութիւն կատարել ինչպէս երբեմն եղած է:

2. Հին Կանոնագրի ծրագրին նկատմամբ, պէտք է գիտնայ լամբն ո՞ր թէ Ս. Աթոռը թէեւ հաշտութիւնը բնականաբար բաղձաց, բայց անոր միջնորդ կամ գործիքն եղող Կանոնագիր ծրագիրը չէ ընդունած բնաւ. և երջանկայիշատակ ու յիւրաւի Մեծն Լեւոն ԺԳ. հայասէր Քահանայապետն թէեւ հաշտութեան համար տուած է կոնդակ զոր ամենքս ալ քեզի չափ կարգացած ենք, սակայն Կանոնագիր ծրագիրը ո՛չ թէ միայն հաստատած Ձե՛, այլ և եկեղեցական մասին նկատմամբ դատաւարեց զայն. և իր հրաւիրած և ապա ըստ մասին կատարուած սրբազրութիւններով ալ բնաւ չվաւերացուց զայն: Ի պահանջել հարկին բազմաթիւ documentներովն կարող եմք ապացուցանել: Եւ հիմա նոյն Ս. Աթոռն է որ դատաւարտեց ու մերժեց նոր ծրագիրը:

*
* *

Յը հետեցնենք ուրեմն որ Դիտողը լաւ ևս ըրած պիտի ըլլա՞ր. եթէ լուրեր՝ փոխանակ ջատոգով հանդիսանալու այնպիսի դատի մը զոր անհնա-

րին է պաշտպանել ճշմարտապէս Կաթողիկէ միալով . և դեռ աւելի աղէկ ըրած պիտի ըլլար , եթէ լինքը նախ կատարելով իր պարտքը , նոյնը քա-
րողէր ամենուն , փոխանակ իր գրութեամբ գալթակդեցնելու ընթերցող-
ները . վասն զի Քրիստոս Տէրն մեր վա՛յ կարգացած է այսպիսիներուն :
Բայց կը յուսանք որ իր յօդուածին տրուած այս պատասխանը կարգաւով ,
անկեղծօրէն կ'օգտուի , խնդիրները ըստ օրինի լուսաբանուած տեսնելով .
և կը համոզուի թէ այս ծայրայեղութիւնք առթուած են հպարտութենէն ,
հրամայելու մարմնէն , որ ոտնակոխ կ'ընէ մինչև իսկ Ս . Եկեղեցւոյ նուիր-
ական Կանոնները . թէ անոնց մէջ մեծ դեր կը խաղայ նախանձն , ապտ և
չափազանցութիւնը թէ՛ ի գովեստ թէ՛ ի պարտաւ , դատողութեանց մէջ
թիթեւամտութիւն , փոփոխամտութիւն , գործելու մէջ շտապ . ասոնք մեզ
և մեր համայնքին ընտել դարձած հոգեբանական ահապին թերութիւններն
են , շարժառիթ մեծամեծ չարեաց : Դարձեալ պիտի համոզուի թէ այս
ծայրայեղութիւններն վերջին հերձուածին անթեղուած կայծերն են , թէ
ոմանք գործողներուն կը շարժին ի տգիտութենէ , այլք իրենց կիրքերէն ,
միւսներն շահու տեսակէտէն , իսկ կան և ուրիշներ որոնք թէև կը պնդեն ,
բայց ճշմարիտ Կաթողիկէայ չեն , և կ'ուզեն կաթողիկէայ Հասարակութիւնը
կամ ազատ կացուցանել (émanciper) Հռոմայ գերիշխանութենէն , և
կամ ջնջել , աջակցութեամբ օտար թշնամի տարրներու : Արդ աս ամէնը
դասապարտելի բաներ են . և ճշմարիտ Կաթողիկէի մը համար յաւէտ խոր-
շելի , որ իր Հովուապետին ձայնը կը ճանչնայ իբրև ձայն Քրիստոսի .
և անոր ձայնը լսելով , կ'երթայ անոր ետեւէն հլու և հնազանդ , յարօտս
ճշմարտութեան , ի կեանսն յաւիտենական :

Կաթողիկէ



ԳԱՂՂԻՈՅ ԿԱՐԴԻՆԱԼԱՑ ՆԱՄԱԿՆ

ԱՌ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՍ ԲՈՐԹՈՒԳԱԼԻ

Այն ահաւոր աղէտը զոր ազանդաւոր Կառավարութեան մը պարտադրած նոր ամբարիշտ օրէնքը պատճառեց Կաթողիկէութեան ի Բորթոլաւ, ամբողջ Կաթողիկէ աշխարհի ժողովուրդներուն կարեկցութիւնը արթնցուց, արցունքները խլեց, և համակրական ցոյցերն տեղացուց: Ամէն կողմանէ մխիթարական և քաջալերական թղթեր, հեռագիրներ և խրախոյաններ հասան: Մասնաւորապէս Կաթողիկէ երկիրներու Եպիսկոպոսներ միահամուռ և խմբովին մասնակցեցան այս խանդավառ ցոյցերու: Ի մէջ այլոց, կ'ուզենք մեր ընթերցողաց իւր նմայշ ներկայացնել Գաղղիոյ Վսիմ. Կարդինալներուն գեղեցիկ գրութիւնը, լի օծութեամբ և եղբայրական սիրտփանօք, յանուն ամբողջ Գաղղիոյ Եպիսկոպոսաց, ուղղեալ առ Գերերջանիկ Մէնտէս Պէլլոյ՝ Պատրիարք Լիզպոնայ.

Լիօն, 23 Օգոստոս 1911

Գերաւնճար և Պաշտական Տէր.

Պիտի չգարմանաբ եթէ, իբրև թարգման և յանուն Արքեպիսկոպոսաց ու Եպիսկոպոսաց Գաղղիոյ, և մեր իսկ անուամբ, կուգանք ողջունել ի ձեզ՝ Պատրիարք, Արքեպիսկոպոսունք և Եպիսկոպոսունք Բորթոլաւի, այն ազնիւ զոհերն որք իրենց նեղութիւններով աշխարհի տեսարանն եղան. « Առիշտուիք եղեալ »:

Ամենէն աւելի կը պատկանի մասնաւոր Գաղղիոյ Եկեղեցւոյն՝ կարեկցութեամբ և խրախոյ անվեհերութեամբ մը զգածուիլ, հանդիսատես ըլլալով այն մեծ պայքարին զոր կը մղէք այնչափ քաջութեամբ՝ — Գերաւնճար և Եկեղեցւոյ մէջ խառնուիլ — և այն յաղթութիւնը զոր ստացաք, երբ Առաքելոց Ոջ կարեւր ոլը պատասխանեցիք Ս. Եկեղեցւոյ թշնամիաց:

Փորձութեան հանգէսը զոր դուք կ'անցունէք, մենք ճանչցանք զայն՝ իր անձկութիւններով ու վտանգներով: Բայց անգամ մըն ալ կը տեսնենք՝ ձեր օրինակով, որ սոյնօրինակ որոգայթներու մէջ չմարտելու ճշմարիտ միջոցն է՝ անվանելի կերպով փարած մնալ Անկեան Վէմին, Մայրաքոյն

Քահանայապետին, որուն պաշտօն տրուեցաւ « Հասաւեղ իւր եղբայրները », և պաշտպանել սրբազան նուիրապետութեան իրաւունքները՝ հերձուածի ո՛ր և իցէ փորձին դէմ:

Մեր սիրեցեալ Հայր Պիոս Ժ.էն՝ Յիսուսի Քրիստոսի Փոխանորդէն, արդ ուրեմն ընդունեցաք ամենափայլուն վկայութիւն մը: Տիեզերքի առջեւ Նա զձեզ բարձրաձայն գովեց ու շնորհաւորեց. ահա ձեզի համար ամենապատուական վարձքն է այս: Երանի՜ թէ մենք ալ փոքր ինչ սփոփանք կարող ըլլայինք մատուցանել ձեզ՝ հաւատելով մեր կարեկցութիւնն ձեր քաջած ամէն չարեաց համար, մեր զարմանքը ձեր այն մեծահոգիութեան համար՝ որով սիրայօժար ընդունեցաք և դեռ կ'ընդունիք ամէն ձեր ստացուածոց կորուստը և հալածանքի ուրիշ ամէն խտտութիւնները:

Նոյն այն դժոխային զօրութիւնը որ տարիներէ ի վեր անընդհատ կ'աշխատի մեր քով ջնջելու քրիստոնէութիւնը, հիմա մարգին կը յարձակի ձեր բարեգործութեանց վրայ և կը ճգնի խափանել ձեր սրբազան պաշտօնը: Մենք պիտի ազօթենք ձեզի հետ, ու մասնակից ենք նաև ձեր յոյսին որ Աստուած՝ իւր անհուն գթութեամբ, հաշտ աւիամբ պիտի նայի մեր չարչարանաց, ու մեր ժողովրդոց համար զանոնք պիտի փոխէ առատագեղ շնորհներու, որոնք անոնց քով պիտի ծաղկեցնեն ամենայն պերճութեամբ՝ նախնեաց հաւատքն ու առաքինութիւնները:

Ընդունեցէ՛ք, Գերամեծար ու Պատուական Տէր, խորին մեծարանաց հաւատարմէն՝ որով երջանիկ ենք զմեզ խոստովանելու

Ձեր Երանութեան

Յարգալիւր ու անձնանուէր ծառայք

✠ Պէտրոս, Կարդինալ Գուշիե
Արքեպ. Լիոնի

✠ Լուդովիկոս - Յովսէփ, Կարդինալ, Լիւստե
Արքեպ. Րենսի

✠ Բօզեն, Կարդինալ Ամսրիկո
Արքեպ. Պօրսոյի

ԳԵՐՄԱՆ ԿԱԹՈՂԻԿԵՒԹ

ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎՆ

Ի ՄԱԳՈՒՆՏԻԱ

Գերմանիոյ առաքեալ Սուրբ Վոնիփակիոսի պատմական քաղաքին մէջն է որ գերման կաթողիկէութեան տարեկան գումարումներն տեղի կ'ունենան: Նոյնպէս քաղաքին պաշտպանն է Գաղղիոյ սիրելի Սուրբ Մարտինոս, որ կարծես թէ անոր տուած է իւր պերճափայլ շոգն սրբութեան. այնքան հինն Մագունտիոյ փողոցները դրօշակաց, ծաղկեփունջներու և զինանշաններու տարափին ներքեւ գոգցես ծածկուած աներևութացած են: Հասարակաց շէնքերն անգամ դրօշադրուած են. և անոնց մէջ ոմանք ժողովոյն տրամադրութեան տակ դրուած են: Ժողովը կը գումարուի թաղապետական ապարանքին մէջ որ պնդուած է փառաւորապէս: Ժողովարանին մէջ կախուած է՝ թանկագին կերպաներու ծալքերով չըրջապատուած, Քէթթէլէր Եպիսկոպոսին պատկերը, որոյ հարիւրամեակը կը տօնուի: Թաղապետութեան երաժշտական խումբը թափօրներուն առջևէն կ'երթայ: Օգոստոս 6 ին, Կիրակի օրը, թափօրը հրաշալի եղաւ. ներկայացուած էին 900 ընկերակցութիւններ. կը մասնակցէին յիսուն հազար մարդիկ. հազար դրօշակներ կը տարուէին պատմական համազօգեւորներ հազուած պաշտօնեայնէրէ:

Այս տարուան գումարումներուն, ճառերուն, Կեցցէ ներսն տիրող շէշտը՝ Քէթթէլէր Եպիսկոպոսին կեանքին ու գործոց յիշատակն էր, որ եղած էր քաջամարտիկ Եպիսկոպոս, գործաւորաց պաշտպան Եպիսկոպոս:

Երկրորդ կարեւորագոյն շէշտն էր կոչ և հրաւէր միութեան Կաթողիկէ Գերմանաց մէջ, ի նկատի առնելով այն վերահաս վտանգները որ իրենց կը սպառնան ձախակողմի կուսակցութիւնէն, ազատախօս խմբակէն, ընկերավարական ուսմկավարութիւնէն, արդիապաշտութիւնէն: Առանց մեծ ազմուկի և շուկի, կացութեան դժուարին պարագայները ամէն մարդ կը հասկնար: Ոչ ոք լաւագոյն շէշտեց միութեան հարկաւորութիւնը քան զԿոմա ֆօն Կալէն՝ Ժողովոյն առաջին նախագահը, բնականաբար իր արժանիքին պատճառաւ, բայց նաև պատեհութեամբ իր ազգականութեան այն մեծ

Եպիսկոպոսին հետ, որոյ յիշատակն ամէն սրտերու մէջ է, ամէն չրթանց վրայ կը չըջի. Գեղ. Քէթթէլէրին քեռորդին է: Մագունտիոյ Եպիսկոպոսը՝ բեմէն իր օրհնութիւնը ներկայից ապրու հրաւիրուելով, շատ պարզ ու հասկնալի ոճով մը միանգամ ևս շեշտեց այն հաւատարմութիւնը զոր Կաթողիկոսայք կը պարտին Ս. Քահանայապետին և իրենց Եպիսկոպոսներուն. ինքն կը խրախուսուի տեսնելով գործաւորաց այս բազմութիւնը՝ հոն համախմբուած. և վստահ է որ ամէն յոյս կորսուած չէ. Գերմանիոյ համար. Նախանձելի է յիրաւի այս երկրին ընկերակցական անեղ ոյժը: Եւ կը լմցնէ իր ճառը զսէլով. Եղէք միաբան, միացէք միաբան, միաբան, միաբան:

Փառաւոր ճառ մը խօսեցաւ նաեւ Պ. Փօն Հէրթլինկ, Կենդրոնի Նախագահ, դեռ նոր ապաքինած ծանր հիւանդութենէ իրեն վիճակած էր. Քէթթէլէր Եպիսկոպոսին կեանքին ու գործոց ներբողականն ընել: Գեղեցիկ կերպով ըրաւ զայն. և յաւէտ յիշատակութեան արժանի առ բառերով աւարտեց իր զրուատիքը: « Քէթթէլէր Եպիսկոպոսն իր բոլոր ընկերական, մարդասիրական, կրօնական, գործաւորական, եպիսկոպոսական գործոց մէջ՝ հազիներու վարիչ մը եղաւ »:

Քանակցութեանց գլխաւոր նիւթերէն եղան կնճռեալ խնդիրներ, որոց համար որոշուեցաւ հետեւեալ օրակարգը.

« Պէտք է որ Հռովմ խօսի եւ Տայ ուղղութիւն մը որուն ամենիք պիտի հպասակին, իսկզի այն կուգայ ամենաբարձր Իշխանութեան »:

Նոյնպէս շատ լուրջ խորհրդակցութեան առիթ տուաւ զպրօցներու խնդիրը: Կաթողիկէ վարժարան ունենալու պայքարը, որ առաւել քան երբեք սուր հանգամանք մը առած է այժմ, անհրաժեշտ կը պահանջէ ընտանիքի հայրերուն ընկերակցութիւնը, ինչպէս կայ ի Գաղղիա:

Սրբիւրայի նոր Եպիսկոպոսն՝ Գեղ. Ֆաուլհայէր, սքանչելի ճառ մը խօսեցաւ, յորում պարզեց մեր ժամանակին մէջ բարի աշխարհականներուն օգտուէտ դերն ի նպաստ Ս. Կրօնի, որոնք մեծ և արդիւնաշատ առաքելութիւն մը կատարած պիտի ըլլան սերալու միացած մնալով և գործակցելով եկեղեցական Իշխանութեանց, առանց անոնց տեղը գրաւելու:

Ժողովոյ փակման օրն ի մէջ այլոց խօսեցաւ Իշխան Լէօվընշթայն՝ Պիոս Ժ. Քահանայապետութեան վրայ, շեշտելով Անոր արժանիքն և փառքը, ինստութիւնն ու երկնաշունչ վարդապետութիւնը:

Առաջին Նախագահ Կոմի ֆոն Կալէն փակեց ժողովը, երգում ընել տարով հաւատարմութեան առ Ս. Քահանայապետն և հնազանդութեան առ Եպիսկոպոսունս:

Յուզումն ու խանդավառութիւնը գերաստիճան էր:

Ֆրանսիճուէրը Նախիկէրըն ազատական թերթին մէջ բողոքական Պատուելի Մաւրընպրէիւրը որ ներկայ գտնուեցաւ ժողովին, այսպէս կ'արտայայտէ իր զգացումները. « Ես կը սպասէի հանդիսատես ըլլալ խաւան ճիկի խաղալիքի մը. ընդհակառակն՝ ինչ որ տեսայ կատարեալ ծանրախոհ վարմունք: համոզում ու եռանդ էր: Քաղաքականութիւնը առաջին տեղը չէր դրուեր բնաւ. այլ յանչափ աւելի հզօր էր Կաթողիկէ կրօնքին համար մտահոգութիւնը, որ այս ժողովոյ տուաւ իւր յատկանշական դրոշմը. և ճիշտ ասոր համար է որ տարբեր կարծիք ունեցող անձինք խորապէս զգածուեցան »:

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

Հալէպի վիճակաւորն Արհի. Օգոստինոս Արքեպ. Սայեղեան Հռովմ հասաւ Ամսոյ 25 ին: Արհի. Աւետիս Արքեպ. Արփիարեան և Արհի. Յուսիկ Արքեպ. Կիւլեան այսօրերս ի Հռովմ պիտի ժամանեն:



Փ. Պիսնի
Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարողիկոսական Սիւնեոյոս ի Հռովմ — Ամեն. Կարողիկոս Պատարփին Երջաքերականն	էջ 167
Պատասխան առ դիտող	» 170
Գաղղիոյ Կարդինալաց Նաւակն առ Եպիսկոպոսունս Բորբուզալի	» 174
Գերման Կարողիկէ Տարեկան Ժողովն ի Մագունիս	» 176
Տեղեկացումքս	» Նոյն

10

